Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2025թ. օգոստոսի 30-ի թիվ 1 նիստում

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«30» օգոստոսի 2025թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանքի (այսուհետ՝ ինքնուրույն աշխատանք) կազմակերպման և կատարման պահանջներն ու ձևերը:
2. Սույն կարգը բխում է ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրից և համապատասխանում է «Գավառի պետական համալսարանի առկա ուսուցման համակարգում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգ»-ին, «Գավառի պետական համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման միասնական հայեցակարգ»-ին:
3. Ինքնուրույն աշխատանքը սովորողների ուսումնական, հետազոտական աշխատանքն է, որը պարտադիր է բակալավրիատի յուրաքանչյուր ուսանողի համար և իրականացվում է ուսումնական պլանով սահմանված արտալսարանային ժամանաքանակի հաշվին՝ դասախոսի առաջադրանքով:
4. Ինքնուրույն աշխատանքի ձևերը, ծավալները և բովանդակությունը որոշվում են համապատասխան մասնագիտական ամբիոններում՝ համաձայն ուսումնական պլանների ու դասընթացի առանձնահատկությունների, և արտահայտվում դասընթացի ուսումնամեթոդական փաստաթղթերում:
5. Սույն կարգը ընդունվում և փոփոխվում է ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

II. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐԱՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Ինքնուրույն աշխատանքի կատարման նպատակները.

1. ուսանողների մոտ խթանել և զարգացնել իմացական, տրամաբանական, որոնողական, վերլուծական և ստեղծագործական կարողությունները, ինքնուրույն հետազոտական գործունեության հմտությունները,
2. ապահովել տեսական գիտելիքների գործնական կիրառումը՝ խթանելով ուսանողների մոտ մասնագիտական իրավիճակային խնդիրների լուծման կարողությունների ձևավորումը,
3. նպաստել մրցունակ մասնագետների պատրաստմանը, նրանց հետազոտական ներուժի բացահայտմանը:

2.2. Ինքնուրույն աշխատանքի կատարման խնդիրները.

1. **ուսանողների վերլուծական և հետազոտական կարողությունների ձևավորում՝** ուսանողներին հնարավորություն ընձեռել ինքնուրույն ընտրել և ուսումնասիրել գիտական աղբյուրներ, ուսումնասիրվող նյութում տարբերակել հիմնականն ու երկրորդականը, ձևակերպել հետազոտության նպատակները և մշակել դրանց իրականացման ուղիները,
2. **սովորողների կողմից հետազոտական աշխատանքում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հմտությունների զարգացում՝** ապահովել ուսանողների կարողությունների զարգացումը մասնագիտական գրականության վերլուծության և համակարգման, գիտական զեկուցումների, ռեֆերատների, կուրսային և ավարտական աշխատանքների պատրաստման, այդ գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների, արդի թվային գործիքների արդյունավետ կիրառման ոլորտներում,
3. **մասնագիտական ինքնուրույնության և ստեղծագործական մոտեցման խթանում՝** խրախուսել ուսանողների նախաձեռնողականությունը՝ գիտական հոդվածների և հետազոտական աշխատանքների պատրաստման, ուսանողական գիտական ընկերությունների գիտաժողովներին մասնակցության միջոցով, ապահովելով ստացված արդյունքների գործնական կիրառումը,
4. **մասնագիտական որակների շարունակական զարգացում՝** նպաստել ուսանողների մասնագիտական պատասխանատվության և էթիկայի ձևավորմանը, ինքնակատարելագործմանը և շարունակական կրթության պահանջի ձևավորմանը,
5. **հետազոտական միջավայրին ինտեգրում՝** ապահովել ուսանողների ակտիվ ներգրավումը ԳՊՀ գիտահետազոտական միջավայրին՝ ստեղծելով պայմաններ հետազոտական հմտությունների զարգացման, թիմային

աշխատանքի փորձի ձեռքբերման, գիտական հաղորդակցման մշակույթի ձևավորման համար:

III. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ

1. Համալսարանի ուսանողների ինքնուրույն աշխատանքն իրականացվում է դասախոսների առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ՝ առանց նրանց անմիջական վերահսկողության: Այն ներառում է ուսուցողական, հետազոտական բնույթի առաջադրանքներ:

2. **Ինքնուրույն աշխատանքի հիմնական ձևերն են.**

1) մասնագիտական գրականության ուսումնասիրություն, տվյալների վերլուծություն և ամփոփում՝ դասընթացի ծրագրով նախատեսված աղբյուրների, դասագրքերի, մենագրությունների, մասնագիտական ամսագրերի, օրենսդրական ու նորմատիվ իրավական ակտերի **ուսումնասիրություն, համեմատական վերլուծություն**,

2) նախագծային աշխատանքներ՝ զեկուցումների, ելույթների պատրաստում, բանավեճերի ու քննարկումների համար նյութերի մշակում, նախագծերի կազմում,

3) հետազոտական աշխատանքներ՝ ռեֆերատների, էսսեների, զեկուցումների և գիտական հոդվածների պատրաստում և ներկայացում, մասնակցություն գիտաժողովներին,

4) թարգմանություններ և աղբյուրագիտական աշխատանքներ՝ օտար լեզուներից մասնագիտական գրականության թարգմանություններ, սկզբնաաղբյուրների հավաքագրում, ուսումնասիրություն, մշակում և վերլուծություն,

5) իրավիճակային խնդիրների լուծում՝ դասընթացի առարկայական ծրագրերով նախատեսված ստեղծագործական կամ կիրառական բնույթի իրավիճակային առաջադրանքների կատարում,

6) համակարգչային և թղթային տարբերակներով թեստերի լուծում,

7) ելնելով դասընթացի բնույթից և առանձնահատկություններից՝ կարող են կիրառվել նաև ուսանողների ինքնուրույն աշխատանքների այլ ձևեր:

IV. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Համալսարանում ուսանողների ինքնուրույն աշխատանքի պլանավորումն իրականացվում է հետևյալ ընթացակարգերով.

1. **Ժամանակի հաշվարկ՝** յուրաքանչյուր ուսանողի ինքնուրույն աշխատանքն իրականացվում է համապատասխան դասընթացի արտալսարանային ժամաքանակի հաշվին՝ առնվազն 4 ժամ Համալսարանում, որն արտահայտվում է դասացուցակում,

2. **կազմակերպում՝**

1) **դեկանատը** վերահսկում է ինքնուրույն աշխատանքի ընդհանուր պլանավորումը և իրականացման ընթացքը,

2) **ամբիոնը** հաստատում է դասընթացների առարկայական ծրագրերը, որոնցում սահմանվում են ինքնուրույն աշխատանքի ձևերը և ծավալները,

3) **դասախոսը՝**

ա/ մշակում է ինքնուրույն աշխատանքի թեմաները, առաջադրանքները, տրամադրում մեթոդական նյութեր և իրականացնում խորհրդատվություն և աշխատանքի արդյունքների գնահատում,

բ/ ինքնուրույն աշխատանքի պլանավորման ընթացքում ապահովում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և թվային գործիքների ներգրավում՝ ուսանողների համար հետազոտական գործընթացն առավել մատչելի և արդյունավետ դարձնելու նպատակով,

3. **արդյունքների վերահսկում և գնահատում՝** ինքնուրույն աշխատանքի արդյունքները գնահատվում են՝համաձայն «Գավառի պետական համալսարանի առկա ուսուցման համակարգում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգ»-ի՝ ստուգարքային և քննական տեղեկագրերի միջոցով՝ կիրառելով բազմագործոնային 100 միավորանոց գնահատման համակարգ, որտեղ ինքնուրույն աշխատանքի համար քննության դեպքում հատկացվում է 20 միավոր, ստուգարքի դեպքում՝ 40 միավոր:

V. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Համալսարանում ուսանողների ինքնուրույն աշխատանքը կազմակերպվում է փուլերով, որոնք ապահովում են ուսումնառության և հետազոտական գործընթացի համակարգված ու փոխկապակցված ընթացքը:
2. Ինքնուրույն աշխատանքի կառուցվածքը սահմանվում է տվյալ դասընթացի առարկայական ծրագրում՝ ըստ դասընթացի առանձնահատկությունների, և կարող է ներառել հետևյալը.

1) **թեմայի ընտրություն և նպատակների սահմանում՝** ուսանողը ընտրում է ինքնուրույն աշխատանքի թեման և իր համար հստակեցնում ինքնուրույն աշխատանքի նպատակներն ու խնդիրները,

2) **առաջադրանքների ձևակերպում՝** դասախոսը ձևակերպում է հստակ առաջադրանքներ, որոնք ուսանողը պետք է կատարի ինքնուրույն աշխատանքի ընթացքում,

3) **ինքնուրույն աշխատանքի կառուցվածքի ձևավորում՝** հավաքված նյութը համակարգվում է և ներկայացվում ըստ բաժինների և ենթաբաժինների,

մշակվում է աշխատանքային պլան, որը ներառում է ներածություն, հիմնական մաս, եզրակացություն և օգտագործված գրականության ցանկ,

4) **ինքնուրույն աշխատանքի գրավոր կատարում՝** նյութը ձևակերպվում է ակադեմիական պահանջներին համապատասխան՝ տպագիր A4 ձևաչափի թղթի վրա՝ անհրաժեշտության դեպքում ներառելով աղյուսակներ, գրաֆիկներ և այլ հավելվածներ,

5) **վերլուծություն և եզրակացություն՝** կատարվում է տվյալների վերլուծություն, համեմատություն, ընդհանրացում, փաստարկում և վերջնական եզրակացությունների ձևավորում:

VI. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՐԽԻՎԱՑՈՒՄԸ

1. Համալսարանում ուսանողի ինքնուրույն աշխատանքները պահպանվում են մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնում մինչև ուսումնական տարվա ավարտը, այնուհետև դրանք կարող են մարվել:
2. Ամբիոնում պահվող ինքնուրույն աշխատանքները պետք է հասանելի լինեն ինքնավերլուծություն և ինքնագնահատում, ինչպես նաև որակի արտաքին ստուգում իրականացնող հանձնաժողովների անդամների, փորձագետների համար՝ գործընթացի գնահատման և բարելավման նպատակով: